Universitäts- und Landesbibliothek Bonn

Girk‘ herdzuatsots‘

Ter-Mkrtč'yan, Galowst

Vagharshapat, 1892

urn:nbn:de:hbz:5:1-12170

Visual Library

Gonesse 2978

~~49~~

Wien, den 24. Juli 1892.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԱԲԱՆԻ

„Հայաց ցեղ ախտաբոյժ“ խորագրեալ

ԳԻՐՔ ՀԵՐՁՈՒԱԾՈՑ

(ԱՐՏԱՏՊԱՒԱԾ 1892 Թ. «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻՑ)։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ
1892

Р. 401



Wien, den 24. Juli

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻՍԲԱՆԻ

ԳԻՐՔ ՀԵՐՁՈՒԱԾՈՑ





(ԱՐՏԱՏՊԱԾ 1892 թ. «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻՑ)։

Վ. Ա. ԱՐՇԱՊՈՒՀԻ
ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ
1892

2978

ՀՐԱՄԱՆԱԻ

ԱՄԵՆ ՏԵՂԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ։

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]*

[illegible]

[illegible]

* ի թիւ 239 [illegible] … = 1335 [illegible]

Ձգտելի չկարողանալը, որ ասացի, ինչ նորություն ասա Աստծո համար,
այլ հոգին ինձ ասաց։ Ձգտելի չանհրաժեշտությունը Ամենատեսչի որ
հայհոյեցավ ինձ ասաց, ինչ նորը պատմելիք չի ունենալ, այլ նորը պատմելիքը
ստեղծելու, ես հասկացի, ասածդ չի ասվածը էր Իմ գործին։ Ձգտելի
չանհրաժեշտությունն ինքնագոհության (sic) ես չինովնության, ես չինվածության
ես վախի պատճառն ես չիրավունքների (?) ես չգիտցած հանձնված ընչաց,
ես որ հասկանալիքն ես որ հասկանալը ասողի հասկանալիքը ինչ
ազատության Ամենուրք - որ անհրաժեշտությունը ասաց Ձ
ես չհոգաց պրծնելի ինչը փրկության չինչ գնահատելը Իմ գործին - ես այս
նորը չհրաշքը ես ցնծալը, ես նախանձը երբ ինչը փրկությունն ասի
էգցրած էր - ես վերջի պատճառ չհոգալ պատասխանել չինչ որպես Իմ.
ես ասի։ Ինչ որպես ի որ հասկացի, ես այլ որպես ~~Ես~~ ոչ ի անարժանաց։ ես
չոչնչացած քշտվածքները չգիտցին երբեք որպես։ Ի՞ գնահատելը, ես վն
ձայնը պատասխանելու. ես այսքան նորը չհրաշքությունը, որ ի վերջին ես
ինքնագիտցը երբեմն գործելու վերաբերմունք։ երբ այնպես ի չուր գործելը
հոգին, վերջնականությունը հասկանալու, ինչ ձայնը երեխայի որպ ասվածը
ի անարժանաց յայս հաստ։ ես ասվածը այնպես ես ասվածը հոգալու ինչ
ինչի նորության ինչ գործելը վերջնական, ես չհոգացը ես ձայնը չհոգալ ոչ
ասվածը ես չհոգաց։ Ձգտելի չհոգալը վերջնական* ես ձայնալը վերջնական որպես
ասվածը ինչ գնահատելու ես ինչու վերջնականությունը ես ինչու վերջնական վերջնական
ի վերջնական չինչ (ինչ) վերջնականությունը։ Ձգտելի չկարողացա (sic) ես չհ
վերջնական նորը չհոգալությունը վերջնական ես ասվածը չի որպես հոգալությունը չհոգալ Ձ ես չհոգ
նորը ինչ չինչ վերջնականությունը։ ես ասաց, ինչ ասվածությունը ես ինչ
նորը ինչ վերջնականությունը, ինչությունը վերջնական ես ասվածը, ես ասվածը
վերջնականությունը ես ասվածությունը։ ես չինչ ինչությունը պատասխանելու ես
վերջնական։ ես ոչ ինչը չհոգալը ասվածությունն որ ասվածը, ինչ ասվածը
ոչ ինչը վերջնականությունը։ ես ոչ ինչությունը չհոգալ ինչ վերջնականությունը ինչը

* par une autre main est effacé

[illegible] [illegible] երրորդութեանն [illegible]: Որ ոչ [illegible]
[illegible] է Ա՛Ծ որ [illegible]
[illegible] և ոչ բնութեան Ան Հօր. այլ [illegible] (այլոյ ?) [illegible]
[illegible] է բնութեանն, և կամ [illegible], և կամ [illegible], և կամ
[illegible] միաւորութեանն, և կամ ապականացու մարմնոյ, և կամ [illegible]
և կամ [illegible] ի բնութենէ [illegible]
[illegible]: Որ ասէ [illegible]
[illegible] և ոչ [illegible]
[illegible]
[illegible], եղիցի նզովեալ: Որ [illegible]
Ան ապականացու, և [illegible]
[illegible], և ոչ [illegible]
[illegible] բնութեան [illegible], և [illegible]
[illegible] բնութեան [illegible], և [illegible]
[illegible], եղիցի նզովեալ: Որ ասէ [illegible]
է [illegible], երկուս բնութիւնս, կամ երկուս [illegible], կամ
երկուս [illegible], կամ [illegible]
[illegible], եղիցի նզովեալ: Որ ասէ [illegible]
[illegible], և կամ [illegible]
[illegible], և ոչ [illegible]
[illegible], և [illegible], որպէս [illegible]
է [illegible], եղիցի նզովեալ: Որ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible], և ոչ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible], եղիցի նզովեալ:

Զայս ամենայն [illegible]

[illegible] որ ամէն. [illegible] եւ որ [illegible] է:

Եւ զայնժամ ~~[illegible]~~ [illegible] որ ամէն. [illegible]

[illegible]

[illegible]: Եւ զայնժամ [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]: [illegible] ԱԾ [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible] ԱԾ [illegible]

[illegible] ~~[illegible]~~ [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]:

[illegible]. [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]: Եւ զայնժամ [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible] ~~[illegible]~~ [illegible]

[illegible]

[illegible]: —

ԾԱՌԱՔԱԲԱՆ.

Մայր-ցուցակի № 2005 ձեռագրում հանդիպումենք 158 հերձուածների կամ հերձուածողների շարակարգութեան, իւրաքանչիւր հերձուածի համառօտ բացատրութեամբ. Գրուածքի հեղինակը, ժամանակը, թարգմանիչը,—որովհետև գրուածքն երևումէ թարգմանական,—և թարգմանութեան ժամանակը անյայտ են. Եկեղեցու հարց երկասիրութեանց մէջ խուզարկելով այս գրուածքի նախօրինակը, մենք գտնումենք, որ սա ուղղակի կամ անուղղակի կապ պէտք է ունենայ Սրբոյն Եպիփան Կիպրացու (Գ. դար) գլուխ-գործոց Panarium-ի կամ Հերձուածոց Գրքի հետ 1). Ա յդ երկասիրութեան մէջ Սուրբն Եպիփանը նկարագրումէ մինչև Քրիստոս և Քրիստոսից յետոյ մինչև իւր ժամանակը երևացած ութսուն այլ և այլ աղանդներ, ըստ իւր հասկացողութեան և դիւրահաւանութեան, և ուղղափառ վարդապետութեամբ հերքումէ նրանց. Բայց Սրբոյն Եպիփանի Հերձուածոց Գիրքը ընդարձակ աշխատութիւն է, մինչդեռ մեր ունեցածը շատ համառօտ է և առանց հերձուածների հերքումների, որով և աւելի համապատասխանումէ Սրբոյն Եպիփանի մի ուրիշ երկասիրութեանը՝ Anacéphaléose-ին, որը Panarium-ի համառօտութիւնն է,

Ս. Եպիփանի Anchorat կամ Angyrotos գրութիւնն էլ պարունակումէ միևնոյն 80 աղանդների յիշատակութիւնը և նմանապէս մի համառօտ Հերձուածոց գիրք է, որը կոչումէ նաև Հաւատոց Գիրք. Բայց ինչպէս ընթերցողը կարող է նկատել՝ մեր ունեցած Հերձուածոց գիրքը—այս վերնագիրը չը կայ ձեռագրում, այլ մեր յատկացրածն է—ոչ թէ 80, այլ 158 աղանդների պատմութիւն է, ուրեմն և ոչ միայն Եպիփանի վերոյիշեալ երկասիրութեանց քաղուածք պէտք է լինի, այլ և յաւելուածներով ընդարձակուած. Պարզ երևումէ, որ շատ աղանդների և աղանդաւորների անուններ կրկին անգամ են յիշուած, այլ և հայ թարգմանչից եղել են յաւելուածներ. Թէ արդեօք Զարբհանալեանի յիշած «Հոլովմունք շար աղանդոց հերձուածողաց կամ «Բացատրութիւն բանից ութսուն հերձուածողաց»-ը նոյն այս գրուածքն է, թէ աւելի ընդարձակ թարգմանութիւն Panarium-ի՝ չենք կարող ասել 2). Մեր մատենադարանի մի քանի ձեռագրերում գտնուած «Բրբանութիւն հերձուածողաց կամ «Բանք հերձուածողաց» կոչուած գրութիւնները, որչափով որ մեզ յայտնի են, կամ բոլորովին տարբեր բաներ են և կամ նոյն այս մեր հրատարակածի

---

1) Migne; Dictionnaire de Patrologie.

2) Հայկական թարգմանութիւնք նախնեաց, 1889 թ. Վենետիկ,

ընչին և սխալաշատ պատառիկներ (1)։ Ընդհակառակ որ այս հրատարակութիւնը անուամբ միայն մի ձեռագրից, գրուած Կ. Պոլսում Փրկչական 1621 թուականին 2), պարզ և գեղեցիկ նօտր-գրով, սակայն սաստիկ շատ սղագրութեամբ և պատիւներով, որով երբեմն դժուարանում է ուղիղ վերծանութիւնը։ Ինագրի հետ բաղդատութիւնը անշուշտ կը սրբագրէր շատ սխալներ, աղջամուղջներ, կը պարզէր մթին և կրճատ ասացուածներ և կորոշէր գրուածքի մէջ ժամանակի ընթացքում եղած յաւելուածները, որոնցից մի քանիսը բոլորովին ակներև են։ Պարզ է, օրինակ, որ Հոմերաբապտիստեք-ը Hémérobaptistes-ի աղջատուածն է (խէ փոխանակ պէ՛ի), Սատառնադացիքը Saturniliens է, Պատադիանոսք-ը պէտք է լինի Մեսադիանոսք (Messaliens) և այլն, և այլն։ Մենք ճշտութեամբ հրատարակում ենք մեր ձեռքում եղած ձեռագիրը, նրա ուսումնասիրութիւնը թողնելով մասնագէտ աստուածաբաններին։ Մեզ աւելի հետաքրքրում է այն ազդեցութիւնը, որ ունեցել են այս և սրա նման գրուածքները մեր ազգային կրօնական կեանքի վրայ։ Զանազան հերձուածողներին վերագրուած զազրագործութիւնները, բամբասակ և անմիտ մեղադրանքները՝ Հայաստանում բարգուեցին մեծ մասամբ Թոնդրակեցիների վրայ։ Այս մասին ունինք պատմական գրաւոր անտիպ փաստեր։ Միւս կողմից հետաքրքրական են թարգմանչի գործ դրած ազգային հին աւանդական անուններ՝ Երան և Ծոհմական գևերի կոչումը, որ յիշեցնում են մեզ Եղնիկ Կողբացու եղած ազանգոցի մէջ յառաջ բերուածները։ Մարէ, Շեթի կանանց և Արարատցի Պօղի յիշատակութիւնները, թէև անախռոնիզմներով լի, Մանիքեցիների երգմնաձևը, և այլն, և այլն։

Անցեալ անգամ Անանիա Նարեկացու Խոստովանութեան Գրի և այս անգամ այս թարգմանական գրուածքի հրատարակութիւնը մեր այն համոզման արդիւնքն է, որ «Ընարատ»-ը իւր կրօնական—պատմական բաժինը մեծ մասամբ պէտք է յատկացնէ նախնեաց կորած համարուած կամ անտիպ մնացած երկերին և նրանց հետազօտութեանը, քիչ թէ շատ ծառայելով մեր Ձեռագրերի մատենադարանի հարստութիւնները երևան հանելուն և նրանց ժամանակի մաշող ժանիքներից ազատելուն։

ՄԻՒԲԱՆ.

---

1) Եպիփանի գլխաւոր երկասիրութիւնը ծանօթ էր և Պատմահօրը, որ մի վկայութիւն է բերում այդ գրքից, տալով դրան Ցանգիմանութիւն Հերձուածոց անունը (Խորենացի Ա. 6)։

2) «Թվին կենարարին ՌՈՒՆ. և ի հայոց թվին ՌՀ. գրեցաւ ի քաղաքն ի Ստամբօլ, ձեռամբ յոգնամեղ Սահակի, որք աւկտիք ի սմանէ ազաչեմ չիշել զանիմաստ գծողս, և աստուած ողորմի ասել, զի թողցէ տէր զյանցանս մեր, ամէն»։ Այս ձեռագրի մասին շուտով առիթ կունենանք աւելի մանրամասն գրելու։

ՀԵՐՋՈՒԱԾՈՂՔ ԵՐԵԻԵԼԻՔ ԱՅՍՉԱՓ ԵՆ ԵԻ ԱՅՍՈՒԻԿ, ՉՈՐ ՍԵՐՄԱ-
ՆԵԱՑ ՍԱՏԱՆԱՅ Ի ՄԱՐԴԻԿ։

Ա. Բարբարիմոնք, որ կոչին խուժադուժք, սկսեալ յԱգամայ մինչև ի Նոյ, զի ոչ գոյր առաջնորդ և ամենայն ոք ըստ կամաց իւրոց գնայր։

Բ. Սկիւթիմոնք՝ ի Նոյէ սկսեալ մինչև ցաշտարակն և յԱգաթայ սկսեալ ի կողմանս Սկիւթացւոց, որ և Թրակաց(իք) անուանեցան։ Սոքա զվինս և զՆարս դիս պաշտեցին, ըստ խրատու դիւի ումեմն՝ Լըռիանդոս անուն։

Գ. Հելենիմոն(ք)՝ ի ժամանակացն Սերուքայ սկսեալ։ Սոքա ի ձեռն պատկերայ և նկարագրութեանց զանձինս սկայիցն կախարդաց պաշտեցին և աստուածացուցին ի խեցի և ի քարի և յոսկի և յարծաթի և (ի) պղինձ և յերկաթի և դարձան ի հեթանոսութիւն։ Ցեղս որոյ և պատուեցաւ ի Պիթագորայ և յայլոց։

Դ. Ցուդայիմոնք, որ է հրէութիւն, յԱբրահամէ և ցուդայէ, որ է չորրորդ՝ որ ի Յակոբայ, յորոց սկսաւ թլփատութիւն և աճեաց, որք ասեն զՑուդայ զանչիշելին անզարտըս յաւիտենից տանջանացն՝ վասն մատնութեան տեառն, որ է հրէութիւն յայտնապէս։ Վասն նոցա Պօղոս բարբառեցաւ ասելով. ոչ բարբարիմոնք, ոչ սկիւթիմոնք, և յուդայիմոնք, այլ ամենայնի Քրիստոս[1]։

Ե. Պիթագորացիքն, որ է հեթանոսաց հերձուածք, որք են գնացողականք։ Բայց սա արգելոյր զոհս յաստուածոց՝ պղնձատրս ի ճաշակելոյ, և ասէր. ի լուսոյ վեր՝ անմահ,

1) Եա. Կողոսացիս Գ. 11։

և անտի ի խոնարհ՝ մահկանացու, և ի փոխումն շնչաւորաց ի մարմնոյ մինչև յանապատնայ, և ՚ե՚ ամ լռել ասպր աշակերտելոցն նորատնկից, և յետոյ զինքն առաւած անուանեալ վասն իմաստութեանն։

Զ՚ Պղատոնացիք՝ զաստուած հիւղ և տեսակ անուանեցին, զոչիսարկս ծննդական և անմահ, և աստուածային երիս մեռանս ունելով՝ բանական, սրտմտական, ցանկական՝ և զկանայս հասարակաց՝ ուր և կամեցի որ խառնակեսցի, և զոգիս մարդկան փոխոխելիս ի մարմինս, և աստուածս բազումս ի միջէ օրինադրեցին։

Է՚ Աստիկեցիք՝ զմարմին զամենայն օրինադրեալ ասեն, և զոյսի զաշխարհս զայս աստուած անուանեն, և ամենք ի հոյ գլնութիւն նորա ասացին լինել, և անձն բնութիւն երկրի և երկնի, և այս գլուսաւորագ, և շունչ փոխանելիս։

Ը՚ Եպիկուրացիք՝ զաշխարհս ինքնեզ ասացին և ոչ յաստուածոյ, և զտեսակս՝ անհատս, և բարեպաշտութիւն՝ զուտելն և գըմպելն, և (ոչ) նախախնամութեան Աստուծոյ ասացին գարմանել զարարածս, այլ ըստ պատահման ։)։

Թ՚ Թարմորիմնք՝ որ կոչին Շամրատացիք՝ սոքա հեթանոսք էին ի բաբելացւոց և յաւուրս Աղեքսանդրայ ի Պաղեստին եկեալ՝ Շամրատացիք կոչեցան, որ է պահապանք, և ընկալան զօրէնսն Մովսիսի ի ձեռն Եզրի քահանայի, և ունին գՏրէիցն կարգն, և խոստովանին զաստուած արարիչ գոյիցս, բայց երկիր պագանեն աստուածոյ ի Հարկէ, գի գկուռս իւրեանց բերեալ ի յերկրէն իւրեանց Թագեցին ի Գաբեղին և ի Գերզոմ, որ է ընդ Հարաւ կրաւսալէմի, և գյարութիւն ոչ ընդունին, և ոչ զայլ մարգարէան՝ բայց ի Մովսէսէ և ի գրոց նորա։

Ժ՚ Գոմիտացիք և Սերեացիք՝ զսոսա կատարեն հրէարէնս։

։) 2՚ «և նախախնամութեան Աստուծոյ ասացին գարմանալ»։

ԺԱ. Եռոտանիք՝ ոչ ուժեք ընդիմանան վառն Ճառատոյ, այլ որոյ որ պատահէնն, ընդ նոսա ածնեն։

ԺԲ. Գորիթացիք՝ զնայն կրօնս ունին, զի ի սամարացւոցն են, բայց զշաբաթ և զիւմխիտութիւն պատուեն առաւել քան զՍամարացիսն, և շնչաւոր ոչինչ ճաշակեն, և ի պահս և ի կաստութիւն առաւել վարին, այլ և առ երեսս յարութեան Տառատոն, և առանց Հանապազ լուանալոյ ոչ կոչին արժանաւորք։

ԺԳ. Գրամատիկոսք՝ որ անուանին գալիրք, սոքա զաւանդութիւն ծերոցն ունին, ոչ յօրինաց՝ այլ յանձանց։ Եւ առանց լուանալոյ ոչ ուտեն, և ոչ ըմպեն, և ոչ աղօթեն։ Եւ ի հրապարակէ մնեալ՝ ոչ ննջեն առանց լուացմանն։

ԺԴ. Փարիսացիք՝ որ կոչին որոշեալք, կոչեն զինքեանս ընտիրս քան զամենայն մարդիկ, և պահեն երկիցս ի շաբաթու, և ամենայն Տնայք և խորութիւնք ի նոցանէ ելանեն։

ԺԵ. Սադուկեցիք՝ որ կոչին անձնարգար, որք էին ի Սադոկայ քահանայէ և զամենայն կարգս ըստ հրէիցն ունէին, բայց զսուրբ Հոգին, և զհրեշտակս, և զյարութիւն ոչ ընդունէին։

ԺԶ. Համերաձախտիտէք՝ որ ասին նոքա միրոխլք. ամենայնիւ նման են հրէից, բայց ասեն՝ որ ոչ միրոի Հանապազ՝ ոչ ընդունի զկեանն յաւիտենականս։

ԺԷ. Ոմիկենոսք՝ որ նման են հրէից և ընդունին զօրէնսն Մովսէսի, բայց զբազումս ի մարգարէիցն ոչ ընդունին։

ԺԸ. Նազօրացիք՝ որ կոչին ուխտաւորք, միս ոչ ուտեն և մինչ ի Մովսէս և Յաբրահամ ընդունին զնահապետսն, և այլ ոչ ևս։

ԺԹ. Հերովդիանոսք՝ նմանք են հրէից և ի խրատուէ դիւաց Հերովդէի՝ որպէս Քրիստոսի՝ ակն ունին, և որ ինչ պատիւ է Քրիստոսի զայն նմա համարին։

— Ա՛յս ԺԹ. հերձուած՝ յԱդամայ մինչև ի Քրիստոս։

Ի. Սիմոնացիքն՝ ի Սիմոնէ մոգէ էին, յաւուրս առաքելոցն, Սամարացի գոլով, որ ոչ ընդունին զյարութիւն՝ և զաշ-

խարՆս ոչ ասեն աստուածոյ արարած։ Որ և կին մի Լուսին անուանեալ շրջեցուցանէր և իւրն անուն Արեգակն դնէր, և յԱթէնս նկարել եաւ պատկեր երկուցն ի պաշտօն, և զբախտն և զպատահմունս՝ պարգևեալ յԱստուածոյ՝ ըստ աստեղացն իչխանութեան գուշակէր [1]), որպէս ի Ծնունդս դանդաղէին Եգիպտացիքն և Քաղդէացիքն։ Եւ կոչեն Շամրատացիք Հայր, և Հրէայքն Քրիստոս զնոյն ասեն, և Շամրատացիքն ըստ Սիմեոնացւոյ վարին, բայց զաշխարՀս ի հրեշտակաց ասեն արարեալ [2])։

ԻԱ. *Աստառնազացիք՝ և ոգբա ըստ Սիմեոնի աղանդին վարին և ասեն անճանօթ և ծանօթ աստուած։*

ԻԲ. *Բասիլիդէսք՝ ի Բասիլիդեայ ուսեալք, որ աշակերտ էր Սիմեոնացւոց, բայց. ՃԿե. երկինս ասեն և անուն գնեն նոցա Հրեշտակականս և նոյնքան աստուած ասեն ի նոսա։*

ԻԳ. *Նիկոդոսացիք՝ ի Նիկոդոսէ մոլորեցան, որ ընտրեցաւն ի սպասաւորութիւն այրեաց. որ յետս կալով ուսոյց զպղծագործութիւն իւրոց աշակերտացն, զի ունէր կին գեղեցիկ, ըստ որում նախանձէր, և ածեալ ի հրապարակ եթող զնա՝ ում կամիցի ամուսնանալ։ Բայց ոչ նա և ոչ դաւերք իւր ընդ ումեք ամուսնացան։ Եւ զԱստեղկիայ և զՊռունիկիայ և զայլոց բարբարոսաց վարս և զկարգս եմոյծ յեկեղեցի։*

ԻԴ. *Գնաստիանոսք. ոգբա զնորին զօշաքաղութիւն և զապուեղութիւնս գործեն, որ յեգիպտոս փարաւոնացիք կոչին և ի վերին կողմանս՝ Սակոնգացիք և առ ումանս՝ Զաքէացիք։ Եւ ումանք՝ կոդէանոսք, և ումանք՝ Բորբորացիք։ Եւ ոգբա ամենեքեան ի Բաբելոն պարծին։*

ԻԵ. *Կարպոկրատիանոսք՝ որք ի Կարպոկրատէ ասիացոյ ա-*

---

1) Ձ. Լուսին, Արեգակն և աստղ բառերը գաղափարագիր։

2) Ձ. «գուշակէր, Որպէս ի Ծնունդս դանդաղէին Եգիպտացիքն և Քաղդէացիքն և կոչին Շամրատացիք Հայր...»։

դանդաղն, որ ուսոյց զամենայն աշխարհիս անխափար գործել և ասաց՝ որ ոչ կատարէ զկամն զիւրոյն ոչ կարէ ի վերին երկինս անցանել։ Եւ ասաց՝ թէ Ցիսուս շունչ խնամալի ընկալաւ և ապա գիտաց զվերինն պատմել և թէ որ զբանն Քրիստոսի պահէ՝ հաւասար նմա լինելոց է, և զյարութիւն ոչ ընդունի և պատկերս Ցիսուսի արարեալ, և Պօղոս նոցա 4) և Հոմերոնէս ի ծածուկ՝ որոց խաւնին ծխէր և երկիր պագանէր ի Հոռմ։

ԻԶ. *Կերենթիանոսք և Մերենթիանոսք, որք են հրէայք, և պարծին ի թլփատութիւն, և զաշխարհս ի հրեշտակաց ասացին լինել, և զՑիսուս յառաջապիտութեամբ ասեն ասուածացեալ։*

ԻԷ. *Արիանացիք՝ նման կերինթացւոյն ասեն, և Սամոսատցիքն նմանեալ կեսացւոյն են՝ որք ասեն զՑիսուս Քրիստոս սահեղծե(ա)լ (ղ)երկինս 2) և զՀոգին սուրբ, և զգեցեալ միայն ասեն զմարմինն Ադամայ Քրիստոսի և ոչ միաւորեալ ընդ անարատ աստուածութիւնն, և զարձեալ մերկանալ և զգենուլ ի գալատեացն, և զվարս հրէից ընդունին 3), և զաւետարանն և զառաքեալսն ընդունին, բայց զառանց վկայութեան թուղթն ոչ ընդունին, և ասեն զնա մարգկային մտօք ասացեալ, և ոչ խոստովանին ի նմա ընակեալ զՔրիստոս։ Ի մեռ գարշին և զՀուր որպէս զաստուած պատուեն։*

ԻԸ. *Վաղենտիանոսք՝ զօրէնսն Մովսէսի և զյարութիւն ոչ ընդունին, այլ սակաւ բանս, որ իւրեանց առասպելաբան պատշաճի՝ ընդունին։ Ն. յաւիտեանց 4) անուանս ասեն՝ արուաց և իգաց, և զամենեսեան զնոսա ի վերին հօրէն*

---

1) Ձ. «Պ ղ օ ս ն ց»։

2) Ձ. երկինք բառը գաղափարագիր։

3) Ըստ մեզ պէտք է կարգալ՝ ուրնին։

4)=30 յաւիտեանց։

ճնեալ ասեն, և առաւաւծս անուանեն զյաւիտեանս։ Եւ ունին գիրք մի՝ զՍիմեն կախարդի, որում Պրակս Աղաքեղոցն կոչեն, և զԲրիստոսէ ասեն թէ մարմին յերկինս զգեցաւ և որպէս ընդ խաղողակ ինչ ընդ կայան անցաւ և ոչինչ առ ի նմանէն։

ԽԹ. Սեկուենդացիք զվաղենտիանոսացն զպղծութիւնն վարին, բայց զերկաթ առաւել պատուեն։

Լ. Պաղումացիք զվաղենտին ունին, և գձայնս հաւուցն հմայեն և։

ԼԱ. Մարկիոնացիքն. Մարկիոնս այս վախճանակից էր։ Հաղարբոս. Բ. սկզբանս ասէ, և յարութիւն ոչ ընդունին և .ԻԸ. յաւիտեանս ասէ։

ԼԲ. Կողարբիանոսք զՄարկիոնին ունին, բայց .Ը. յաւիտեանս աւելի ասեն։

ԼԳ. Հերակլիանոսք՝ որ զնոյն .Ը. առաւոպելաբանեն, և զՄարկիոնին և զվաղենտին(ին) և զայլ բազում հերձուածս։ Եւ լուանան ապրանամ աղով և ջրով։

ԼԴ. Ովփիտեանք՝ որ են օձախաղացք, որք զօձս վարառուրեն որպէս զԲրիստոս, և ունին բազում օձս ընդ ինքեանս ի սապատս՝ ի պաշտօնս իւրեանց։

ԼԵ. Կայիանոսք՝ զօրէնան Մոխիսի բամբասեն և որ նմա ետ զօրէնան, և զօրինազանցսն պատուեն, և զկայէն վարառուորեն, բռնաւոր զօրութիւն ունել ասեն նմա, և զՅուդայ մատնիչ՝ չաստուածոցն անուանեն, և զկորս և զԴադան և զՍոդոմացիս։

ԼԶ. Արքունիսէք՝ որ ասին իշխանականք. սորա բազում իշխանութիւնս խոստովանին արարածոց և ի պիղծ ոճս իւրեանց գարշելի իրաց Հաղորդին, որ զպրալի է ասելն՝ զապահարն կանանց։ Եւ զՀին կտակարանս ուրանան՝ և զյարութիւն։

ԼԷ. Կերդիանոսք՝ ի կերդինոսէ ընկալեալ զանուան(ա)կոչութիւնն, որ յԱսորոց մինչև ի Հռոմ ձգեաց զպատանդն իւր։ .Բ. սկզբանս քարոզեաց Հակառակս և զԲրիստոս արա-

բած ասաց, և գյարութիւն ոչ ընդունի, և մատամբ ինչ վարի օրինօք։

ԼԸ. Սեթիանոսք. սոքա զՍէթ փառաւորեն և ասեն զնա ի վերին մօրէն ծնեալ, զի յետ սպանմանն Աբէլի ոչ ասեն Ադամայ ամուսնանալ ընդ Եւային, այլ ի յերկնային մօրէն ասեն ստացեալ զՍէթ, որ ինժանէ կարգի ազգ մարդկան։ Եւ ոմանք ի նոցանէ Պարկեշտագոյնք անուանին. Ծառ կենաց զՊառահայ մայրն անուանեն՝ խոստովանել և ամուսնանալ 1) ի դրախտին, զոր և յանցումն կոչեն։

ԼԹ. Մարկիանոսք. Մարկիանոս այս Պոնդացի էր՝ եպիսկոպոսի որդի, որ ապականեաց զկոյս և փախեաւ ի Հռոմ, զի հայրն եհան զնա յեկեղեցւոյն։ Եւ սա խնդրեաց ապաշխարութիւն և ոչ գտաւ. դարձաւ և եղև Հակառակ եկեղեցւոյ և ասաց ՝Բ. սկզբունս՝ բարի և չար։ Եւ զնոր կտակարանս օտար ասէ յօրինաց և գյարութիւն ուրանայ։ Եւ որչափ մեղանչէ՝ մկրտիլ պարտ է ասէ, և թէ զր երախայ մեռանի՝ զայլ ոք մկրտել յանուն նորա, այլ և կանանց հրամայէ մկրտութիւն առնել։

Խ. Ղուկիանոսք. սոքա ըստ Մարկիոնի ապանդին վարին՝ և աւելի։

ԽԱ. Ապելիանոսք. սոքա ըստ Մարկիոնի չարագործեալ, բայց զկիզքն մին ասեն, զի միոնն աստուած ասեն, և նա արար այլ աստուածս, և արար աստուած մի, որ չար գտաւ, և նա արար զաշխարհս։

ԽԲ. Սևերիանոսք. սա զգինի խոտէ և զորթ՝ ասէ, ի վիշապէ բնութենէ արեան կաթիլ, և երկիր բուսոյց զնա։ Եւ զկինն ի բաց մերժէ, և ասէ թէ դատակոծմանն գաւաւ է, այսինքըն՝ գիւաց։ Եւ ընդ արուս խառնակին անխտիր, և գիրս ունին ի ծածուկ, որ զՀին և զնոր կտակարանս անարգէ։

ԽԳ. Տատիանոսք. սա աննպակիից էր Յուստինոսի մարտիրոսի

---

1) 2. խոստիլ և ամուսնանալ։

և զհետ կատարման նորա անկաւ յայտնգն Մարիխնի։

Խդ. Եակրիանոսք՝ որ կոչին ժուժկալս. սորա ի Տատի(ա)նոսէ հերձուածոյն են, և զամուսնութիւն խոտեն, և շնչաւոր ինչ ոչ ուտեն, և խաշն և արջառ՝ որձ և էգ ունին։ Եւ զմարմնական կիրս Աստուծոյ բանին ոչ ընդունին, և մանաւանդ զերկիւղն, և զբրատունսն, և զչարչարանսն սոսկ աստուածութեանն տան, և ոչ միաւորեալ անօրէնութեանն, և են սորա աստուածաչարչարք։ Յայսմ աղանդոյ են և Ապոլինարիստքն կոչեցեալ։

Խե. Մոնտանացիք և փռիւգացիք. սորա զնոր և զհին օրէնսն ընդունին, բայց զմարգարէսն ոչ ընդունին և ի Մոնտանոս պարծին և ի Պրիսկիլլեայ։

Խզ. Պեկուզացիք. Պեպուլիա[1]) գեղ է ի Գալատացւոց աշխարհին և նորա կոչեն զնա աստուածային երուսաղէմ[2]), և քահանայս զկանայս կացուցանեն։ Բակաձև նստուցանեն զգլխաւոր կանայսն և մանուկ տղայ խոցոտեն՝ ձգելով ի միջեանս, և առ ոմ մեռանի՝ նա է նոցա քահանայ։ Եւ յարենէ մանկանն հայ արարեալ տան ի հաղորդութիւն պատարագոյ և զսակերան թաղեն՝ կամ ի բարձր տաճարի՝ առ երգս, կամ ի բարձր լերինս։ Եւ յորժամ խօսին ընդ ումեք կամ երդնուն՝ զձեռս ամբարձեալ ասեն. Միածինն, Բարձրեալն, որ ի վեր է քան զամենայն։ Եւ առնեն՝ Տիտղէ կամ Պրիսկիլլեայ յղացեալ ծնաւ (զ)Քրիստոս ի Պեպուզայ։ Եւ զնա իգական կերպարանս առասպելաբանեն։ ՈւՀին զհին և զնոր կտակարանս՝ ըստ իւրեանց կամացն փոխաձևեալ։

Խէ. Զորեքտասանականք. սորա ի տասուչորն ՚Ա. օր զամիկ կատարեն՝ լուանի ՚ԺԴ-ն զինչ և պատահէ օրն, և զչորեքշաբաթին չորեքտասան կոչեն։ Երկրորդ զամիկ և զանարժան օրէնսն թողուն մինչև այլ նոյն դիպեսցի։ Իսկ մերս՝

---

1) Ձ. յ ե է մ։

2) Թերևս պէտք է կարդալ՝ Պ ե պ ո ւ զ ա ց ի ք և Պ ե պ ո ւ զ ի ա։

ըստ առաքելական կանոնին՝ եթէ ոչ ջերմն եղեալ ի սեղանն և նոյն ժամայն ծախեսցի՝ ոչ է ընդունելի։ Բայց ի Կիլիկիայ ժողովն կանոնեցին յ.Բ. Ճրագալուցն մասն ինչ թողուլ հիւանդաց և ողջոյց և այլոց և։

ԽԸ. Ողոքինոսք, զորս անբանս կոչեմք։ Սոքա զՅովհաննու աւետարանն և զՅայտնութիւնն ոչ ընդունին։

ԽԹ. Ադամիանոսք, սոքա զԱդամ կենդանի ասեն, և արք և կանայք մերկ ժողովին յեկեղեցին։ Եւ զհատատացեալ աւազակն՝ ասեն թէ՝ Ադամէր, և զեկեղեցին կոչեն՝ դրախտ, և զինքեանս՝ արեղայս և կուսանս, և առ երեսս զամուսնութիւն ոչ ընդունին։

Ծ. Սամսենացիք, սոքա որ են առաջին եկեղեցիք սուրբ (ք)[1], բնակեալ յԱրաբիայ՝ ընդդէմ Մեռեալ ծովուն և են խաբեալք[2] յեղբմայէ սուտ մարգարէէ։ Եւ զՄարթուայ և զՄարթայ կանայք առաջնորդ իւրեանց աղանդոյն ասուսած կարծեն և ի գոգ նոցա երկրպագեն [3] զցանկութիւն պաշտելով, ըստ որում և խրոնացիքն։

ԾԱ. Թէոդիանոսք, սոքա ի Թէոդոսէ սկիւթացւոյ խաբեցան, որ կայր ի Բիւզանդիայ, երևելի ուսմանն հեթանոսութեան, և ընդ քրիստոնեայս ըմբռնեցաւ ի հալածմանն և յորժամ նոքա կատարեցան՝ երկուցեալ ի տանջանացն, սոսկ մարդ ասաց զԲրիստոս ըստ կամաց թագաւորին։

ԾԲ. Մելքիսեդեկացիք, սոքա զՄելքիսեդեկ ոմն ծեր պատուեն՝ Աջակողման Ջօրութիւն կոչելով, և ոչ մարդ լոկ, այլ ի վեր քան զմարդ, և յանուանս այս ածել համարձակին զամենայն մարդիկ։

ԾԳ. Բարդեծանեցիք, Բարդեծան այս ի Միջագետս էր ուղիղ վարուք և յետոյ փոխեցաւ ի Վաղէնտիանոսի հերձուածն։

ԾԴ. Ներսիանոսք, սա էր ի Սեմրնեայ ասիացւոց և կառոք

---

1) Ձ. «Եկեղեցիք, սբ. բնակեալ...»։

2) Ձ. «խաբեալք յեղբմայէ...»։

3) Ձ. «երկիրպագիցեն»։

շրջէր, և զՔրիստոս ասէր՝ հայր և որդի (և) հոգի սուրբ, և ասէր զինքն Մովսէս և զեղբայրն իւր՝ Ահարոն։

ԾԵ. Վազենտիանոսք. սա ի բաղեթեան բնակէր, որ է Ամրաբիայ։ Խոստովանին զՔրիստոս մարդ սոսկ և առաքինութեամբ աստուածացեալ և յաստիճան որդւոյ աստուծոյ փոխեալ, ոչինչ առաւել քան զԽարայէլ[1]), զի և նոցա կոչեցաւ որդի։ Եւ չարաչար իմանալով զգիրս՝ հաստատեն զազանգս իւրեանց ի գրոց, և զօշաբազութիւնն առանց պատժոյ Համարին։ Սոցա պարկեշտագոյնքն ամենայն կուրա են, զի ախտից ոչ կարեն յաղթել։

ԾԶ. Կաթարիանոսք, որ կոչին սուրբք. սոքա զՆաւատուհանոսայ հերձուածն ունին։ Ջապաշխարութիւն ոչ ընդունին և զերկրորդ ամուսնութիւն խոտեն։

ԾԼ. Անկելիէ, որ թարգմանին՝ Հրեշտակականք։ Սոքա պարծին հրեշտակական ունելով զվարս և զհրեշտակս փառաւորել։

ԾԸ. Ապոստոլիկէ, որ կոչին՝ Առաքելականք։ Սոքա ի կողմանցն Իսիոդիեայ են և ազօթս ընկերօք ոչ ընդունին, այլ առանձինն, և այլաբանութեամբ աւելի քան զարժանն իմանան։

ԾԹ. Բելիանոսք. սոքա զչարչարանս միածնին Հօր և Հոգւոյն գնեն ոչ Համաւթեամբ՝ այլ բնութեամբ։

Կ. Ո(ո)գինացիք. սոքա յՈրոգինի ումեմնէ զաղբագործէ խաբեալք՝ զմարմինս ապականեն երևելով իբրև զպահոդս։

ԿԱ. Միւս Որոգենացիք. այս Որոգինէս ազամանգ կոչեցաւ, ըստ առաջագոյն հռչակեալ իմաստութեանն և մաքրութեանն համագիր, և յետոյ ուրացեալ զյարութիւն մեռելոց՝ և զՔրիստոս առեղծուած ասաց, և զսուրբ Հոգին դրախտ և յերկինս։

ԿԲ. Պօղիանոսք. Պօղիանոս(ս) այս էր Սամոսատացի։ Սա նախ անուանէր զՔրիստոս անսկիզբն, իսկ յետոյ ի Մարիամայ ասաց սկսեալ և յառաջադիմութեամբ Հաճոյացեալ աստու-

---

1) 2 զէլ.

ծոյ։ Եւ երկրորդ գալուստ գ'ի կուգէն 1) երեւումն ասոյ, և որ յառաջ ասացաւ զնմանէ ի մարգարէիցն, ասաց, չէ ասոյգ. և թէ՝ որ ասաց Պրասցուք մարդ և իջցուք և խառնակեսցուք զերեզուա նոցա՝ զիւրական խորհուրդն յայտնեաց, ասէ, և ոչ առ անձնաւորութիւն։ Եւ սոքա վասն մեռելոյ պատարագս ոչ ընդունին և ոչ կատարեն, զի ապականացու և հողեղէն բնութեանս նորոգութիւն ոչ խոստովանին։ Եւ յարութիւն զաճումս ասեն և յանուն առաջնոյ պատարագ մատուցանեն, և որ յանուն լուսաւորացդ և թէ՝ Ցօն կոչեալ գիւր։ 2) Սոքա զբարեխօսութիւն սրբոցն ոչ ընկալան և ոչ զԲրիստոս յարուցեալ ի մեռելոց, և պահեն զշաբաթս սուրբ քառասնորդացն և ծոմանան ի շաբաթու և ի կիրակէի։ Նմանապէս սոքա ի խորհուրդն Ջուր խառնեն և երգնուն յարեգակն։

ԿԴ. Մանիքեցիք. սոքա Մանեայ պարսկի աշակերտք էին և պաշտեն զարեգակն և զլուսին և զաստեղսն։ Եւ երգնուն յարեգակն և ասեն՝ Լուսիկ արեւիկ քաղցրիկ, լի՛ ես տիեզերօք։ Չի Քրիստոս զարեգակն խոստովանին և դիւաց երկրպագեն և զԲրիստոս կուսիւ երևեալ և խաչեալ ոչ ընդունին։ Բ. իշխանութիւն ասեն՝ չար և բարի, և զհին կտակն հայհոյեն։

ԿԴ. Ցերակացիք՝ որ Ցերակայի քաղաքէ եգիպտացւոց Ղևոնտէ, որ հին և նոր կտակարանաց վարին և մարմնոյ յարութիւն ոչ ընդունին և յամուսնութենէ հրաժարին իբրև զգնաւորս։ Բայց ճգնաւորն այն է, որ գինս տան և խառնակին և զաղջկունս, որ ի չափ հասեալ են՝ պարիս առնուանեն։

ԿԵ. Մելետիանոսք. սա նախ աշակերտ էր Պետրոսի եպիսկոպոսին ալէքսանդրացւոյ և ապա՝ խոտորեալ ի հալածանացն՝ ընդ Արիոսի միաբանեաց։

---

1) Ձ. «գ'ի կուսէն»։

2) Թերևս՝ Թէ ոչն կոչեալ գիւր։

ԿԶ. Արիանոսք. սա զորդին աստուածոյ սրարած ասաց և զսուրբ հոգին՝ ստեղծուած։ Եւ զմարմին միայն, ասաց, Փրկչին (ի) Մարիամայ առեալ և զշունչ, և զառնացի անդամն սորին՝ ոչ։ Եւ սա էր երէց Աղեքսանդրի[1]) և վաղէսի ամբարիշտ թագաւորի վարդապետ։

ԿԷ. Աղդիանոսք. սոքա վարուք ըստ կաթուղիկէ եկեղեցւոյ վարին, բայց ի վանս ուրեք ոչ բնակին։ Ընդին և կարգս ինչ ի ծածուկ զօշաքաղութեան և ընդ մեզ ոչ աղօթեն։ Եւ պատուեն զօդս և զպտուղս, և յորժամ ի մի վայր ժողովին ի խորհուրդս՝ զաստուած ոչ յիշեն, այլ զհոգմ և զսոհմականս, և դիւի ումեմն զոհ մատուցանեն՝ նրան և ցոհմական կոչեցեալ անուն։ Եւ զամիկ ընդ հրէայս կատարեն, և զամենայն բարերար իւրեանց՝ յանաանոյ և ի գաղանաց՝ պաշտեն։ Եւ զեպիսկոպոսունս և զքահանայս մեր բամբասեն վասն ընչասիրութեան։

ԿԸ. Փոտինոսք. փոտինոս այս ի Սերբայ էր, որ ի սերմանէ ասաց ծննեալ զաստուած բանն ի Մարիամայ ըստ Պօղեայ առնօրէնութեանն, զմարմին տեառն ապականացու, և այսահար զառաքեալն, 2) որում՝ ոչ գոյ թողութիւն։

ԿԹ. Մարկեղանոսք. Մարկեղոս այս յԱնկիւրեայ Գալատիոյ էր և յանդիմանեալ ոչ եկն յուղղութիւն, քանզի յառաջ Սարեւեան էր, այլ և աշակերտք նորա ի նմին կային։ Սոքա զմարմին Տեառն յարեգական առեն եղեալ։

Հ. Հոմերիանոսք, որ ասին՝ կէսք յարիանոսացն։ Սոքա ըզՓրիստոս յինքենէ առեն ստեղծեալ, և որդի անուանեն զնա վասն մերձենալոյ չարչարանացն նորա ի Հայր, յորմէ արդեօք համարելի է կալեալ վճարումն, կամ որ բաւականութեամբ կայր, կամ խնամողին բոլորեցունց աջոյ աստուծոյ, զի նման և եթ է ձեռնհասութիւն։ Եւ յեղակարծումն և առանց միջոցի զարմանալիս երևեց (ուցա)նէր, որ մշտըն-

---

1) Ա յսինքն է՝ Ա ղ ե ք ս ա ն դ ր ի ո յ։

2) Հ. զ ա ռ ա ք ե ա լ ն. պէտք է կարդալ զ ա ռ ա ք ե ա լ ն, թերևս և՝ զ ա ռ ա ք ե ա լ ս ն։

ջևնաւորեալ էր[1]) յաւազանեղոցն վայելչութեանէ, և ընդ եղկելին պարարկեալ տարակուսութեամբ շնորհեալ միխիթարութիւն ասպատանութեան։

ՀԱ. Պենէ-մատոսք՝ Բարիոք ասին[2]), բայց զՀոգին հայհոյեն, և ոչ ասեն զնա յաւանութենէն անապատ բղխումն, այլ բան շնորհաց յաջողութեան առեղծեալ սրբատրական[3]) զօրութիւն։

ՀԲ. Միւս Աբիանոսք, սա Պանտացի էր, երէց Ստաթէ եպիսկոպոսի և ընդ Աբիանոսք կամակից եղեալ։ Եւ զի ոչ ոք կացցէ զնա եպիսկոպոս՝ բազում ինչ հակառակ եկեղեցւոյ կարգեաց։ Ոչ է պարտ, ասէ, վասն մեռելոց պատարագ առնել, և ոչ պահել զուրբաթ և չորեքշաբաթ։ Եւ զսուրբ քառասնեորդն և զշաբաթին արգելոյր ի կատարելոյ. զմիս անխտիր հաչէ[4]) ուտել յամենայն աւուր, և ի վատիկութիւնս հեշտանալ։ Պահք այն է, ասէ, զի իւր կամօք ոք պահիցէ, և ոչինչ կարգատարել աւուրս, և զի՝ չեմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք, և՝ ոչինչ աւելի է եպիսկոպոս քան զերէց։

ՀԳ. Աէտիանոսք, որ ՅԱէտա[5]) կիլիկեցւոյ՝ եղեալ տարկաւագ ի Գէորգայ եպիսկոպոսէ և խոտորեալ յաշանդն Աբիանոսաց։ Սորա զերեքշաբթի խոտեն և ի նմա ասեն եղեալ զչար։

ՀԴ. Եւնոմիանոսք, սորա ՅԱէտիանոսէ և ի նորին աշակերտէ մնալոր եալ՝ ծոյլ ասեն զՔրիստոս և զՀոգին յաւանութենէն։ Ասեն առաւած՝ այլ փոքրագոյն, զի ոչ ասէ Հաւասարի[6]) Հօր յէութեանն։ Եւ որ յայլոց հերձուածոց գան առ նոսա՝ դարձեալ մկրտեն, և որ ՅԱբիանոսացն գան առ

---

1) Հ. մշտնջնաբլէր.

2) Հ. « Ասեն ».

3) Հ. սրբաբերն.

4) Ա յսպէս Հ.ում, այսինքն՝ հաչում է (շան պէս) = հրամայում է, Թերևս կարելի է կարդալ և՝ հաճէ, այն է՝ հաճութիւն է տալիս։

5) Հ. « յաւէտա ».

6) Հ. « հաւասար ի Հօր . . . »

նոսա՝ գլխիվայր մկրտեն։ Եւ զարուամոլութիւն, և զպոռնկութիւն, և զայլ մեղս ոչինչ համարին, զի հաւատս միայն ինդրէ աստուած՝ ասեն։

ՀԵ. Դեմիւրիտք, որ ասին Ապոլինարիտք, որք ասեն՝ հոգի և միտք ոչ էառ Տէրն։

ՀԶ. Անգիտիքս Մարիամիդէ, որ կոչին՝ Դիմամարտք Մարիամու, զի ասեն թէ յետ ծննանելոյն զՔրիստոս ամուսնացաւ ընդ Յովսէփայ։

ՀԷ. Մարիամիտք. Սոքա յամի միանգամ կարգեալ են իւրեանց ինչ մատուցանել յանուն նորա, որոց անուն եդաք՝ Խորակարարս։

ՀԸ. Պաւաղիանոսք, որ ասին Ազօթականք։ Մերձաւորք են սոքա ամենայն հերձուածոցդ հեթանոսաց։

ՀԹ. Արտեմոնացիք. եղծանէր զամենայն գիրս և նորս գրէր։

Ձ. Սիմոն և Կղէոպբոս՝ ոչ ընդունին զմարգարէական գիրս, և ոչ ասեն զաստուած արարիչ և ամենակալ, այլ ի հրեշտակաց զոմն, և ոչ խոստովանին զաստուած բանն ծնեալ ի Մարիամայ։ Սոքա առ Պօղոսիւ էին։

ՁԱ. Աւեգիոս [1]. Սա ասէ թէ աստուած՝ որ ասեզծ զմարդն, անձն և պատկերս զմերս ունի, և թլփատութիւն առաչաք ասեն և ոչ ճշմարտութեամբ։

ՁԲ. Միւս Սեթիանոսք, որ պատուեն զօձս և ասեն, թէ բարի խորհեցաւ ուստն մեր, և աստուած նախանձեցաւ ընդ մեր բարին և անէծ դնաւ ուստն որոյ պաշտեն զօձն։

ՁԳ. Կասիանոսք, որ զմաշիկ պատմուճանն՝ զմարմինս ասեն։

ՁԴ. Սամնիտք, որ զարեգակն պաշտեն և ջրոյ սպաս սանին և այլ բազում սուտ աւանդս ունին։

ՁԵ. Պռոսէքիտք, որք ասեն՝ հաւատովք և բարի գործովք հնար է յարքայութիւնն գնալ, առանց մկրտութեան։

ՁԶ. Վալէնտիանոսք՝ ·Բ· արարիչ ասեն՝ բարոյ և չարի· զհին

---

1) Կարծեմ ուղղագոյն՝ Աւկիոս = Audius·

գիրսն չարին ասէ և զնորս՝ բարոյն, և յանդնդոց և ի լուսթենէ գոյացեալ զաշխարհս։

ՁԻ. Ա յլ վաղճնտիանոսք. ։Բ. որդիս ասէ՝ զմինն բնութեամբ և զմիւս(ն) շնորհօք, և զմարմինն յերկնից ասէ բերեալ։

ՁԸ. Միւս Աբտեմոն՝ շունն, սոսկ մարդ ասէ զՔրիստոս և զաշակերտսն՝ սոսկ մարդս, և ոչ աստուածախառն մարմնոյն, որ անբաժանելի միաւորեցաւ ընդ անապակ[1]) աստուածութեանն։ Եւ վասն այսորիկ ուրացաւ զփրկական ձայնն ի սրբասացութեանն՝ պատճառանօք երրորդութեանն։ Վասնորոյ անխափր օրինագրեաց ճաշակել զսուրբ խորհուրդն և ոչ սրբութեամբ, զի ոչ աստուածոյ՝ այլ սոսկ մարդոյ մարմնացելոյ։

ՁԹ. Փանէս՝ ասաց վասն հոգւոյ մարդկան, թէ յերկինս էին և յերկիր անկան, վասն զի մեղս արարին։

Ղ. Ատերոս՝ զդրախտն խմանալի ասաց, և ոչ զգալի, և ոչ շօշափելի։

ՂԱ. Աբիանացիք՝ զառաքելոյն Պօղոսի զթուղթն ոչ ընդունին և կոչեն զնոսա օրէնս խոտորնակս, բայց զշաբաթ և զայլ խորութիւն հրէաբար ունին։

ՂԲ. Կեդրոն անօրէնն՝ ասաց, թէ աստուած որ յաւիտենից քարոզեցաւ ոչ է Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի սա յայտնի է, ասէ, իսկ նա ոչ է յայտնի։ Եւ ի միւսեանն՝ ասէ, յանուն հօր ամենայնի որ ոչն ճանաչի, և յանուն մօրն ամենայնի, և յանուն Քրիստոսի։

ՂԳ. Փռի(ւ)գացիք՝ մի անձն ասեն զաստուած և ։Գ. անուն։

ՂԴ. Ադաբիանոսք՝ զՅոգին մեռանել ասեն զկնի մարմնոյն։

ՂԵ. Լամբատխանոսք՝ զքեմաւորացն պոռնկութիւնն կատարեալ բարի ասեն։

---

1) Զ. «անապատ»։ Ա յս երկու բառերի շփոթ ընթերցուած ունի և Խորենացին. «իսկ երանելին Նուն եւ գնաց աշակերտել զայլ ևս գաւառան վրաց յ ա ն ա պ ա կ լեզուէն (Բ. 86) Սանահնի Ներսես գրչի օրինակը՝ յ ա ն ա պ ա տ։

ՂԶ· Գաւիանոսք՝ ասեն զՀոգիս մարդկան, թէ ցանկութեամբ շրջելով ի մարմինս իջանեն։

Ղէ· Ահանգելիսք, որք ասեն աւետաւոր հրեշտակն մարմնացաւ ի կուսէն և պաշտեն զնա։ Եւ զեկեղեցիս, և զնշխարս սրբոց, և զքահանայս արհամարհեն։ Եւ զցաւս, և զհարուածս, զոր աստուած պարգևեաց մարդկան վասն թողութեան մեզաց, զայն ի դիւաց ասեն։ Եւ զցաւս, և զհիւանդութիւնս փոխոխելիս համարին, և փախչին ի հիւանդաց, որ է մեծ չար և սկիզբն ուրացութեան աստուածոյ։ Սոքա և զդեղս հատանեն յանուն դիւաց և հրեշտակաց· գրելով զանուանս նոցա։ 1)

ՂԸ· Սաբէլ Լիբացին՝ շփոթէ Գ· անձինս և մի ասէ՝ ·Գ· անուամբ։

ՂԹ· Սոփրոնիոս՝ զբանն ազգմամբ ասէ բնակեալ ի կոյսն։

Ճ· Մանի՝ ·Բ· նիւթս և ·Բ· բնութիւնս ասէ։

ՃԱ· Վաղենտինեանոյքն՝ ·Լ· իշխանութիւնս և ·Լ· երկինս ասեն։

ՃԲ· Մարկիոնեանոյքն՝ ·Գ· հակառակ էութիւնս դնեն և տհաճ են ընդ արարածս։

ՃԳ· Թէոդորիտոս՝ ·Բ· երեսս առեղծանէ ի Քրիստոս և նղովակիւ առնէ զմարդն բանին աստուածոյ։

ՃԴ· Պօրփիւր՝ բազում հայհոյութիւնս հնչեաց յարարչութիւնն, զոր սոսկալի է ասելն։

ՃԵ· Եւտաքէս՝ խառեաց զամուանութիւն և զմիս ուտելն։

ՃԶ· Եւտիքէս՝ զմարմինն յերկինից ասաց բերեալ։

ՃԷ· Մարկեղոս՝ ազգումն ասաց զբանն ի մարմնի, և ոչ էութեամբ աստուած։

ՃԸ· Կերեստիանոսք՝ զծնունդն և զարչարանքն սոսկ մարդոյն ասեն, վասնորոյ անխոտիր հաղորդին։

ՃԹ· Մոնտայիք՝ զկենդանագիր պատկերն Քրիստոսի ոչ ընդունին։

---

1) Ձ· «յանուն դիւաց, և հրեշտակաց գրելով զանուանս նոցա»։

ՃԺ· Ատրոմէս՝ ·Գ· երկին ասաց և ·Գ· իշխանութիւնս։

ՃԺԱ· Մարկեղ Գաղատացի՝ զմարմինն Քրիստոսի յերկրի թաղեալ ասէ տակաւին։

ՃԺԲ· Գէորգէոս փղաւագրոս՝ յաւելուած Աբիոսի։

ՃԺԳ· Մաքսէնտէս և Գայինէ և Ուրսակէս և Վաղէնտէս՝ զնոյն ասացին՝ զԱրիոսին։

ՃԺԴ· Եկեղեցիքն՝ ասեն թէ ոչինչ է օգուտ յանուն մեռելոյն պատարագ և աղօթք և ողորմութիւն ի կենդանեաց, որք մեղօք գնացին։

ՃԺԵ· Բարգեճան՝ ասաց թէ մարմնոյն Ադամայ ի հող դառնալն, զի արարածն անցական է։

ՃԺԶ· Բերիղգեղոս· ասաց պիղծն, թէ Քրիստոս յառաջքան զմարդանալն չէր անձամբ և գոյութեամբ, և ոչ իւր սեպհական 1) աստուածութիւնն, այլ հօրն է և ի նմա բնակեաց 2) կամաւ հօրն։

ՃԺԷ· Եւէոս՝ ասաց զհոգին մահկանացու։

ՃԺԸ Հելեսացիք՝ խոտեն զամենայն գրոց բանս, և ունին գիրս, և ասեն զնա ի յերկնից անկեալ։ Եւ ասեն, թէ որ հաւատայ յայս գիրս՝ թողութիւն գտանէ այն մեղացն, զոր ասաց Քրիստոս, թէ ոչ ունի թողութիւն։ Սոքա թողուն և յերկինս հանեն հակառակ առաքելոյն Պօղոսի։

ՃԺԹ· Որսևէս՝ օրինադրեաց ոչոն ոչ ուտել զի զհօր սերմ՝ ասէ, ուտէ այնպիսին։

ՃԻ· Սաբէս ասաց՝ հակառակ ինչ ոչ գոյ։

ՃԻԱ· Եպիկուրոս՝ զաշխարհս անեղ ասաց։

ՃԻԲ· Արիատոսէլ՝ զնախախնամութիւն մինչև յարեգակն և ի լուսինն և յաստեղս ասաց, և անտի 3) ի խոնարհ՝ արուեստարանաց և արուեստարանից, և զհոգիս մարդկան մահկանացու ասաց։

---

1) Հ. Սեփհական.

2) Հ. բնակեց.

3) Հ. «անդի»։

ձԻԳ· Ձեմականքն ոչ համարին զոք արժանի խօսելոյ՝ մնեալք յամբարտաւանութեան։

ձԻԴ· Շնականքն, որով հնապարտք էին։

ձԻԵ· Հերձանօսականք՝ զոմանս ի դիւաց չար և զկէս բարի անուանէին, և կոչեն զնոսա Անդրագինէս։

ձԻԶ· Պիհռոնացիք՝ ասացին ամենայն ինչ ընդդիմակ ունի։

ձԻԷ· Փեքսեա՝ ընդդիմակս արար ընդդէմ ճշմարտութեանն։

ձԻԸ· Կրիսպոս՝ այնմ լուծմանս արար։

ձԻԹ· Հիմնէս և Փիլիտէս՝ ասացին թէ յարութիւն արդէն եղեալ է։

ձԼ· Բորբիոսք, որ ասին Ցղմայինք, զամենայն մեղս անխտիր գործեն։

ձԼԱ· Աղօթականք՝ ասեն թէ ոչ կարէ մկրտութիւն զմեղս սրբել առանց աղօթից։

ձԼԲ· Մարկալանացիք· կանայքն մկրտութիւն առնեն, և յարութիւն ոչ ասեն։

ձԼԳ· Մոնտանոս փռիւգացի՝ զինքն ասաց Հոգին սուրբ և կանամբք շրջէր պղծով։

ձԼԴ· Սաթքատինոք՝ զամուսնութիւնն պոռնկութիւն ասեն և կանանց յարութիւն ոչ խոստովանին։

ձԼԵ· Նաւատիանոս Հռոմայեցին· զապաշխարութիւն ոչ ընդունին, որք ի հալածանսն գլորեցան։

ձԼԶ· Բասիլիդէս ասէ, թէ Քրիստոս եկն բնակեցաւ ի Յիսուս։

ձԼԷ· Կերինթացիք· Կերինթոս աշխարհաւ եգիպտացի և ազգաւ սառակինոս։ Սա բազում գրեանս եկն ի կողմանս ասորոց՝ բնակեցաւ առ կնոջ միում։ Սա եղեալ ի տանիս կոչէր զօգային գևսն յօգնականութիւն և ի բարկութենէն աստուծոյ անկեալ ի տանեացն սատակեցաւ։ Եւ առեալ կինն գինչսն՝ գնեաց մանուկ մի Մանի անուն և ետ յուսումն փիլիսոփայութեան։ Եւ եղև այր խօսող և գրեաց սա աւետարանն և գոչեաց Թով(մ)այի, և ասաց վասն Քրիստոսի, թէ միտս և հոգի ոչ ունէր։ Եւ ·Բ· սկզբունս

ասաց՝ 1) Նիւթ և խաւար, և ասաուած՝ ասէ, առանց նիւթոյ չկարէր ինչ առնել։

ձԼԸ. Յառեռնելիոս՝ խոտեաց զամուանութիւն և բամբասէ զարարիչն արուի և իգի։

ձԼԹ. Ուրսակէս և Վաղենտէս և Գայիոն՝ արարած ասեն զորդին աստուծոյ՝ յետ ժամանակի։

ձխ. Միւս կերինթոս ասէ՝ Յիսուս ի Մարիամայ (և) Յովսեփայ ծնեալ ըստ կարգի ամենայն մարդկան, և զմարմինն ապականացու, և Քրիստոս ի վերուստ եկեալ բնակեցաւ ի Յիսուսն։ Եւ զարքայութիւն մարմնապէս խոստովանին ի վերայ երկրի, և ամուանութիւն յետ յարութեանն։

ձխԱ. Սկէբանոս և Թէոդիտոս և Ապեմիոս և Մարկելոս՝ սոսկ մարդ ասացին զՔրիստոս։

ձխԲ. Թէոդոսիանոսք. Թէոդոս ոմն եպիսկոպոս Բիգիպտոս հանդերձ բազում եպիսկոպոսօք սկսաւ թիւրել զկրօնս եկեղեցւոյ և ուրանալ զյարութիւն մեռելոց։ Իսկ Թէոդոսի թագաւորին աղօթիւք՝ յարեան Ե. մանկունքն Յեփեսոս, և յամօթ եղեն։

ձխԳ. Սփիւռացիքն՝ զազիրս բարբառին, զոր և ասել ազաւղի է։

ձխԴ. Մծղնէացւոց աղանդն ի Պիթագորականացն բուսաւ և զօրացաւ։ Երթեալ բանակեցան առ Պիսիդեաւ, և զոր ինչ գործեն գարշելի է խօսել մեզ։ Եւ անունք աղանդոյն անուանեն Գունգուշեանք, Սղլեանք, Արեգակնօղ 2) Բանջաբակելք։

ձխԵ. Դիոդոր՝ տարսոնեաց եպիսկոպոս, մարդ սոսկ ասաց զծնեալն ի Մարիամայ մինչև ի միրուութիւնն։ Եւ յիշանել Հոգւոյն՝ շնօրհօք արժանացաւ որպէս աստուծոյ կոչիլ։ Եւ թշնամանս համարեալ է զիսաչն Ցեառն, որով վիրկեցաքն։

ձխԶ. Թէոդորոս Մանուեստացի՝ աշակերտ Դիոդորայ, ասաց սոսկ մարդ զծնեալն ի Մարիամայ, և զի յաղթող եղև

---

1) Ձ. «արաց»։

2) Ձ. «Արգնօղ»։

ամենայն ախտից և ճգնեցաւ՝ պատուեցաւ քան զարա-
րածս և արժանացաւ լինել տաճար բանին աստուծոյ:

ձԽԻ· Նեստոր պիղծ՝ անախորձացի, աշակերտ Թէոդորայ Մա-
նուեստացւոյ, ոչ ասէ ծննեալ զաստուածն բանն ի Մա-
րիամայ և ոչ ասէ զնա աստուածածնին, այլ մարդածնին:

ձԽԼ· Թէոդորիտոս՝ եպիսկոպոս կիւրիս քաղաքի, աշակերտ
Նեստորի: Ասէ՝ Թէ աստուած ոչ եղև մարմին, այլ յար-
գանդի կուսին բնակեցաւ. առընթեր գոլով մարմին է-
սեղծ և յետ ծննանելոյն միացաւ աստուած բանն, և բը-
նութիւնքն յատկապէս մնացին: Եւ սոսկ մարդ ասէ չար-
չարեալ, զոր և պատուլ մարդկային բնութեանս ասէր:

ձԽԹ· Լևոն, Հռոմայ հայրապետն, տուն ասաց շինեալ առ ի
Մարիամայ ծննեալ մարմինն, և ։Բ։ բնութիւն ասէ, և սոսկ
մարդ չարչարեալ ասէ:

ձՂ· Քաղկեդոնի ժողովն զԼևոնի . . . . . .
։Բ։ բնութիւնս անխառնելիս ասացեալ ի Քրիստոս:

ձՂԱ· Մարտինոս՝ Հռոմայ պապ, ։Բ։ կամս և ։Բ։ ներգործութիւ-
նըս յաւել ի Քրիստոս (ասէ)[1]:

ձՂԲ· Մաքսիմոս՝ մինակեց շնկեց, զնոյն խոստովանեաց:

ձՂԳ· Քաղերթիական, որ է արիւնաբրուաց. Թագաւոր ոմն
յունաց աշխարհէն պատահեաց պիղծ աղանդին Պոլիկե-
նաց և ոչ կարաց դարձուցանել զնոսա յաղանդէն իւրեանց.
Հալածեաց զնոսա անդր քան զԵեառն Կովկաս: Եւ կին մի
առաջնորդէր նոցա՝ Մարէ անուն, կախարդ և կունդ: Ջա-
րագործացն բարի առնէր և բարեգործացն՝ պատուհաս,
և զիանայս հաստատակաց ուսուցանէր, և աւուրս ։Ե։ որո-
շե(ա)լ— զոր մեք հաստատակաց կոչեմք— զայն սատանայա-
կանս անուանէր, և ի նոսա հեղուլ արիւն մարդոյ բարի
ասէր, և որ ուտէ և ըմպէ զարիւն մարդոյ՝ այն արդա-
րութիւն: Եւ յաղդմանէ սատանայի տեսիլ տեսանէր և

---

1) Ա յս «ասէ»ն աւելորդ է։

մանկունս փղոտէր և ասէր, թէ նոցա Հոգիքն գան ի տեսիլ կախարդաց։

ձՇԹ. Ապա կին մի՝ Շէթի անուն, այնր աղանդոյն, եկեալ զկնի Թուրքացն եկն ի Հայս, և պօղ ոմն ՅԱրտաւաեայ գաւառէն, որ աշակերտեալ էր սրբոյն Եփրեմի, առեւանգեալ զկինն, և խառնակեցաւ աղանդն ընդ քրիստոնէութիւնս։ Ջարեգակն Քրիստոս ասէին՝ ոչ մեռեալ և ոչ յարուցեալ. և վասն այնորիկ ծոմանան ի կիրակէի։ Եւ եկեալ ժուրն Եփրեմ ոչ կարաց քակել զնա յաղանդոյն և անէծ զնա և գնաց։

ձՇԵ. Կոզմականք, այսինքն խաւորեալք. սոքա խոսեալք ի սուտ մարգարէից Հաւատան և սուտ առաքելոցն և սուտ վարդապետաց, և պաշտեն զաստուածեան Հոգին։ Զքաղմուածեան վկայիցն սաղմոս[1]) ոչ ընդունին և ասեն թէ նոքա ոչ կարեն բարեխօսել առ աստուած վասն մարդկան։

ձՇԶ. Ազօրականք, այսինքն Քաղցրականք՝ սոքա զԱննա՝ զԱստուածածնի զմայրն և զեղիսաբեթ ի Հոգւոյն սրբոյ ասեն յղացեալ։

ձՇԷ. Եւսիքէս՝ փախուցեալ յերկուց բնութեանցն՝ զաէրոսնական մարմինն ոչ ի մեր բնութենէս ասաց և ոչինչ առեալ ի Մարիամայ, այլ որպէս կամեցաւ՝ ասէ, և ուստի կամեցաւ ըստ աստուածային կարողութեանն, բայց ծնաւ՝ ասէ, ի Մարիամայ [2]), այլ ոչ ի Մարիամայ։

ձՇԸ. Իսկ Ցուլիոս առաւել փախչելով ի քաղկեդոնականացն՝ գայթակղեցաւ, զի ասաց եթէ մարմինն Քրիստոսի փոխեցաւ և եղև ի միաւորութեանն, որ յարգանդին, որպէս զբանն բնութեամբ, և թէ՝ ոչ է արարած, և ոչ չարչարելի, և ոչ բովանդակելի, և ոչ մահկանացու, և թէ՝ երևումն առաչօք էր։ Եւ ոմանք յաշակերտաց նորա որպէս թէ ի նմանէ ուսեալք ասեն, թէ յորժամ պատէր խան-

---

1) Ձ. «սղս»։ Թերևս՝ «աղս»=աղօթս։

2) Ձ. «ի մարիմ»։

Ձարրօք ի մերին՝ նոյն մարմինն յաթոռ վառաց էր, և յորժամ էր ի բաղկաց 1) Ծերունոյն, նոյնպէս տղայաձև յաթոռ վառաց հանգչէր։ Նոյնպէս ասեն և ամենայն. ուրեք, և ասեն թէ որ ինչ յօրէնսն գրեալ է վասն քաղցի և ծարաւոյ, և վաստակի, և ննջելոյ, ոչ վերաբերի ի մարդկութիւնն, այլ յաստուածութիւնն։ Եւ աստուածութիւնն ընկալաւ զայն ամենայն կամաւորութեամբ, զի կամքն՝ որ ի Քրիստոս, աստուածայինն էր։ Վասն այսորիկ Յուլիոս երկրորդ Մանի անուանեցաւ։

Այլ մեք ընդ ճշմարտութիւնն գնալով, վառաւորեսցուք զՔրիստոս աստուած, յաւիտեանս ամէն։

ՎԵՐՋ։

---

1) Այսպէս Զ. ում։

Գինն է 50 կոպեկ։

Wien, den 24. Juli 1900.

Ew. Hochwürden!

1. Brosset, Collection d'historiens arméniens, sind nur zwei Bände erschienen. Ich habe sie bei einer grossen Buchhandlung bestellt. Sie wird hoffentlich dieselben finden.

2. Der betreffende Artikel betitelt sich: Pawpa-ʧʃ pwpqswchʂ: Der Verfasser ist: Howsepian Dr. Garegin. Der Artikel ist erschienen: Ararat, 1899, Nr. V. S. 211–216; Nr. VI. S. 260–64; Nr. VII. 315–320; Nr. IX. S. 408–413; Nr. X. + XI, S. 469–480. Die Fortsetzung folgt; aber sie ist bis jetzt (ich habe die 5 Nummern dieses Jahres vor mir) noch nicht erschienen.

Sein Endresultat ist: Pawpaʧʃ pwpqswchʂ hat sein Werk im Jahre 633–971
719–739
726/7 (Seite 480)
geschrieben. Wie mir P. Dashian gesagt hat, Pawpaʧʃ pwpqswchʂ hatte mit dem Häresienbuche nichts zu thun. — Pawpaʧʃ [illegible] oder Pawpaʧ Gwtqwp ist dieselbe Person mit Pawpaʧ pwpqswchʂ; so hat mir P. Dashian gesagt und so steht es auch in Howsepians oben erwähnten Artikel (S. 263).

3. Leider ist es mir nicht im Stande Ihnen eine Übersetzung der Asori-Stücke aus Heimarmene v. 1706 zu besorgen, denn wir haben leider diese Auflage Heimarmene's nicht.

Ich schicke unter Kreuzband ein von dem Verfasser gewidmetes Ex. jener Studien, unter welchen sich auch Pawpaʧʃ findet.

Hochachtend
P. Barnabas Ries. Mechitharist

Venise 13 Mars 1900

Monsieur l'Abbé,

En transcrivant je vous envoie le document que vous m'avez demandé ; je ne veux pas en vous infliger aucune récompense, si vous voulez de votre part m'envoyer quelques uns de vos publications sur les choses arméniennes, j'en vous serais très reconnaissant.

Agréez....

votre dévoué

P. Basile Dr Sargissian
Mechitariste